

վախ չունի նոցա ահարկու բայց սնամէջ սպառնալիքներէն) բայց ի պահանջել հարկին կրնայ ոչ թէ միայն իւր անունը, այլև իւր անձը տալ ի ուր ճշմարտութեան:

ՄԵՆՔ կը փափաքինք որ մեր գրութիւնները Միսիօնարաց վրայ՝ սխալ ըլլան: Բայց Միսիօնարաց մինչև ցարդ այս և ասոր նման բազմաթիւ գրութեանց գէմ լոելը և միայն կարծեցեալ հեղինակի մը խիստ և ծանըր սպառնալիքներ եեթ ընելով բաւականանալը \*), դժբաղդարար կը վկայէ որ իրենց վրայօք գրուած ամբաստանութիւնք իրողութիւններ են. պառա ամենայնիւ մենք դարձեալ կը հրաւիրենք զպատուելի Միսիօնարս որ պատասխաննեն իրենց գէմ եղած գրութեանց, եթէ կը կարծեն որ չափազանցութիւն և սխալ են: Բայց մենք կը հրածենք որ Միսիօնարաց իրենց գէմ եղած գրութեանց չպատասխանելը ոչ այլ ինչ է, բայց միայն այն գրութեանց ճիշդ և ճշմարիտ իրողութեանց պատկերը լինելը՝ որք չեն կրնար հերբուիլ, ինչպէս որ երկու, երկու ալ չորս կընէն չկըրնար հերբուիլ:

Այս պարագայիս մէջ Միսիօնարաց համար աւելի աղէկ ճանքայ չկրնար գտնուիլ, բայց միայն եղած անցած բանները չդիտնալու զարնել:

Հ—Շ—Ո—ԵԴ—Բ—Ն—Ի—Ն

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏՈԿՐՈՒՑԻԱ:

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Շամախու Ա. Սանդխտեան օրիորդական Հոգ. դպրոցի հոգաբարձութիւնը իննդրումէ տպագրել հետեւեալ հաշիւը:

1882 թ. առ մինն Յունվարի մնացեալ էր ուսումնարանապատկան մայր գումար սուրբ Սանդխ. օրի. ուսումնարանին Շամախու ութ հարիւր չորս ոռուք. երկու կոս:

(804 ռուբ. 2 կոպ.)

1882 թ. ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։

Ստացուեց քսան և ուժ անդամներից տուրք, իւրաքանչիւր տասնական ոռութիւն.	280
* Երկու անփոփոխ անդամներից տուրք.	200
* Ա.եց խնամակալուհիներից.	35
* Գոյացած նուերներից և հանդանակութիւնից	102-50
* Թոշակաղրամ աշակերտուհիներից	167-30
* Տոկոսաղրամ ուսումնարանապատկան մայր գումարի	200

(\*) Ականջը կոնչէ Տօղթ. Առւտ Միսիօնարապետին և Յ. Արիստոկրէսեանին:

Ստացուեց յօդուառ ուսումնարանի Գաւառապետ պ. Նառ-	
մէնկոի ձեռամբ	72—50
Հայկական թատրոնի ներկայացումից	60
Ստացուեց պ. Գէորգ Կաճկաճեանի ձեռամբ մի քանի երի-	
տասարգներից նուեր	10—50

Գումար \*) 1971—32

## Ըստ+.

Տուաւ Աւուցաց և Վարժուհուզոյն	536
Տուաւ ծառային վարձ	44
Տուաւ Աւուցմնարանի տան տարեկան վարձ	126
Զանազան ծախուց տուած է	38—11

Գումար 744—11

Մուտք 1971—32

Ռամբ 744—11

Մնամէ ուսումնարանապատկան մայր գումար գանձապահի  
ճօմ\*\*\*)

Դաշտ Ինչպէս յայտնի է ընթերցողաց, երբ հրատարակուեցաւ  
Արարատի 1882 թ. յուլիսի ամսատետրում Շամախոյ սուրբ Սան-  
դղիստեան օր ուսումնարանի մտից և ծախուց հաշուեցուցակը, երևե-  
ցած էր, որ 1881 թ. ընթացքում բացի տարեկան մուտքից, մայր գու-  
մարից և ծախուած էր 261 ո. 30 կ. ըստ որում և յարգոյ Խմբա-  
գիրը զգուշացրած էր հոգարաձութեան և աչա աչքի առաջ ունե-  
նալով այդ հանգամանքը, պատիւ ունի յայտնել հոգարաձութիւնը,  
ինչպէս երեսումէ նաև հաշուեցուցակից բացի այն որ նախկին ուսում-  
նարանապատկան մայր գումարն այլև աւելացածէ 161 ո. 89 կ.

Մենք կատարելով մեր սուրբ պարտականութիւնը՝ յանձնուենք  
նորընտիր հոգարաձութեան ցանկալով ի սրտէ յաջողութիւն։ Յուսով  
ենք որ մեր յաջորդները ևս աչքի առաջ կունենան սմեն սպառնացող  
վտանգ, որ առիթ չի լինել մայր գումարի սպառելուն ըստ որում և  
ուսումնարանին փակման զժբաղդութեան չենթարկելու սպառնենք և  
յուսանք։

Հոգարաձուք	Գէորգ Կաճկաճեանց
	Յովուշի Աերգեյեանց
	Յարութիւն Տէր Էսպյեանց

(\*) Գումարն 1931 թ. 82 կ. (\*\*) 1931 թ. 82 կ. (\*\*\*) 1187 թ. 71 կ. Բացի այս,  
որ հաշուածուած հագարածուած թուերի մէջ սխալներ են արել, այլեւ թոյլ են տուել  
իրանց հաշուեցուցակում ջնջումներ անելու եւ թուեր փոփոխելու, և զգուշութիւն  
ենք հաստիում։

Արարատի խմբագրութիւն պարտք կը համարի որչափոր հանգամանք ները կը ներեն՝ Տաճկաստանի հայ լրագրներից հարկաւոր տեղեկութեանց քաղուածք անել և հրատարակել «Կ. ՊՈԼԱԾՈՅ ԶԵՅՆ» վերնադրոփ:

Մայիսի վերջին օրերում վերջացած լինելով Ճեմարանի քննութիւնները. Գ. Խարանի ուսումնաւարտ երիտասարդները նախ քան թողնելը Ճեմարանի յարկը բարոյական պարտք համարեցին ամսոյս 2 ին հոգեհանգիստ կատարել տալ Ճեմարանի հանգուցեալ Հիմնադրի գերեզմանի վերայ. Այդ երիտասարդները որ Ճեմարանի առաջին խայրիքն են, ցանկալի էր որ իրանց պարտքը միայն հոգեհանգիստ կատարելով վճարած չը համարէին. այլ գործէին յօգուտ այն հասարակութեան, որի նույնքներով իրանց ընկերները բարոյական և նիւթական որոշունդ են ստանում. Հոգեհանգստեան ժամանակ ուսումնաւարտ Պ. Ստեփան Կանայեան կարդաց մի զգացմամբ լի ճառ, որ հարկ համարեց խմբագրութիւնս տպել Արարատ ամսագրիս բանասիրական բաժնում:

«Կմ. Նկատողութիւնները վերնագրով» յօդուածի մէջ սպրդած են տպագրական սխալներ, որոնք այժմ արդէն ուշ է ուղղելը. ի միջի պյուղ՝ Մայիս ամսատետրակի 179 երեսի Վերգելիոսի ոտանաւոր գրուածքի թարգմանութիւնից յետոյ եօթներորդ տողում գրուած է «Տայքն էլ համարումէ ուղղակերտայք» որ պէտք է լինէր. «Տայքն էլ համարումէ ուղղակի Տայք»:

Որքան թէ Տաճկահայոց և թէ Ռուսահայոց լրագրներից տեղեկանումնք Կ. Պոլսոյ ազգային ժողովն ու պատրիարքարանը զբաղուած են կաթուղիկոսական խնդիրով. իսկ այդ խնդիրը պարզաբանելու համար կարգուած է մի մասնաժողով՝ պատրիարք հօր նախագահութեամբ. Ցանկալի էր որ մասնաժողովի եղրակացութիւնները պարբերաբար հըրատարակուէին ի գիտութիւն հետաքրքիր հայ հասարակութեան. իսկ եթէ մասնաժողովի եղրակացութեանց տեղեակ լինելու բաղդը միայն վերապահուած կը լինի մասնաժողով կազմող անդամոց՝ իրեւ առանձնաշնորհութիւն. այն ժամանակ իրաւունք կունենան ուրիշներն էլ կասկածել այդ մասնաժողովի գործունէութեան մասին՝ որ սկսուեց մի գժտութեամբ ընդ մէջ յանձնաժողով կազմող անդամոց, որով Պ. Ստեփան Փափազեան հրաժարուեց մասնակցելու ժողովներին.

«Մեղու Հայաստանի» լրագրի № 57 համարի առաջնորդող յօդուածը Շուշի քաղաքի հայ հոգեոր դպրանոցի տարտամ դրութիւնը ի նկատի ունենալով մատնանիշ է լինում այն հանգամանքների վերայ, որոնց

բնական հետեւանքն են մեր գպրոցներում տեղի գտած թերութիւնները՝ նոյն Մեղուի 58 համարում տպուած Ըուշուայ երկսեռ գպրոցների մասին թղթակցութիւնը շատ տիսուր գոյներով է նկարագրում գպրոցների դրութիւնը։ Մեր գպրոցական հաստատութեանց և յատկապէս Ըուշի գպրոցների վարչութեան ուշադրութեանն է յանձնում խմբագրութիւնս յիշեալ զրուածքները Մեղուի. յուսալով թէ մեր գպրոցների վարչութիւն կազմող անձինք վերջապէս կը մտածեն թէ ո՞րպիսի սուրբ պարտականութիւն են ստանձնել իրանք։ Նորա պէտք է մտածեն որ, թէկ հասարակութիւնը գեռ անտարբերութեամբ հետամուտ չէ իր հասարակական գործերին, թէկ իշխանութիւնը ներողամիտ աչքով է նայում, սակայն կը գայ ժամանակ որ այդ երկուքն էլ իրանց գերի մէջ կը մտնեն և իրանց Խղճի դատաստանին մտիկ շանող պարոնները կը պարտաւորուին խիստ պատասխանատուութեան ենթարկուել:

<sup>«</sup> Մշակ « լրագրի 85 համարում տպուած Արիստակէս աւագ քահանայ Բէնքլեանի նամակի վերայ վստահանումէ խմբագրութիւնս հրաւիրել Թիֆլիզի թեմի վիճակաւոր Գեր. Արիստակէս եպիսկոպոսի, Կոնսիստորայի և Թեմական տեսչի ուշադրութիւնը։

Հաղորդումն խմբագրութեանս, որ Վաղարշապատի տղայոց գպրոցի հոդաբարձուաց եռամեայ ժամանակամիջոցը լրացած լինելով մտադիր են շուտով հրաժարել իրանց պաշտօնից. ժողովրդի ուշադրութիւնն ենք հրաւիրում շուտով նոր հոգաբարձուներ ընտրել, որպէս զի յառաջիկայ ուսումնական շրջանին գպրոցի վիճակը բոլորովին շը գժուարանայ և փակման վտանգին հանդիպի, ինչպէս հաւասարացնում են շատերն ի նկատի ունելով ձախող հանդամանքները։

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՆՔ.

Վ. ԱՐՉԱԿԱՆՔ.

23 Մարտի, Սինոդը ի նկատի ունելով Յովակիմեան Արք. Ղեռնդ վարդապետի խնդրագիրը, որով յայտնումէ թէ հանդուցեալ Տ. Գէորգ. Գ. Կաթուղիկոսի և Սինոդի հրամանով վարած լինելով երկար ժամանակաւ Տպարանական ժողովի անդամութեան պաշտօնը և այժմ ծանրաբռնուած լինելով ճեմարանում Զայնագրութեան դաստուութեամբ և վերակացութեան պաշտօնով՝ խնդրումէ տկարութեան պատճառով արձակել իրան Տպար. Ժողովի անդամութիւնից. Սինոդը ըստ խնդրանց նորա արձակելով Տպար. Ժողովի անդամութեան պաշտօնից. Զ. Ն. Մայիսի կարգեց վերակացու Վեհարանական կայից և գոյից, որոնք